ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 06 >> դեկտեմբերի 2013 թվականի N 144 -Ա

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները (քաղաքապետարանում մուտքագրված 26 նոյեմբերի 2013 թվական N Գ 2734 թվագրմամբ), Երկրապահ կամավորականների միության Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի, ազատամարտիկների դիմումները (քաղաքապետարանում մուտքագրված 27 նոյեմբերի 2013 թվական N Գ 2754 թվագրմամբ) և ելնելով հարցի լուծման անհրաժեշտությունից՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994 թվականներ) զոհված՝ թվով 106 (մեկ հարյուր վեց) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2120 000 (երկու միլիոն մեկ հարյուր քսան հազար)՝ ցուցակը համաձայն հավելված N 1-ի,

2) Զոհված (մահացած)՝ թվով 152 (մեկ հարյուր հիսուներկու) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3040 000 (երեք միլիոն քառասուն հազար)՝ ցուցակը համաձայն հավելված N 2-ի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ՝ թվով 17 (տասնյոթ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար)՝ ցուցակը համաձայն հավելվածի N 3-ի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 286 (երկու հարյուր ութսունվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2860 000 (երկու միլիոն ութ հարյուր վաթսուն հազար)՝ ցուցակը համաձայն հավելված N 4-ի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 93 (իննսուներեք) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 1 395 000 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար)՝ ցուցակը համաձայն հավելված N 5-ի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 37 (երեսունյոթ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 555 000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար)՝ ցուցակը համաձայն հավելվածի N 6-ի,

7) Երկրապահ կամավորական միության՝ թվով 16 (տասնվեց) անդամներից յուրաքանչյուրին՝ 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար)՝ ցուցակը համաձայն հավելված N 7-ի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարել համապատասխան հատկացումները Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան

Լ.Բարսեղյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 06
ք.Գյումրի